

պարար հայրափափազ սիրով, Գա է Որդի իմ սիրելի որով հաճեցայ: Եւ զի մի երկ- բայիցին միտք լսողացն առ ի մկրտեալն և ի մկրտիչն, գայ Հոգին Սուրբ ի նմանութիւն աղանւոյ, մատնացոյց առնելով ըզ- մկրտեալն և վկայելով¹⁶: Որում վայելեն փառք պատիւ և զօրութիւն, Հօր և Որդւոյ և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և յանըս- պառն յաւիտեանս¹⁷. ամէն:

1. Չեռագիրն ունի՝ Ծնողն Հօր, 2. Երկին՝ զգետ զգեցաւ, 3. Զարեգակն՝ արեգակն ի Յորդանան լուացեալ, 4. Եւ ի մարդոյ զԱստուած սրբեալ, 5. յն. չիք զմկրտեալն, 6. յն. յաւելու՝ վարդապե- տերով մեզ, 7. Եւ յիւրով և ձիւթով, 8.

Եւ զոտաւար, 9. յն. միայն զՏերն, 10. Եւ մկրտեցաւ, 11. յն. չիք քաւ և մի լի- ցի, 12. Եւ զիմորդ զանկեալս աղտե- ղութեամբ մարդ՝ սրբիցեմ զԱստուած ան- մեղս: Յոյն բնագիրն այս է. Πως ουν εγω ο χαταρρυπος ανθρωπος αγνωω Θεον, Θεον αναναρτητον. որ է. և զիմորդ ես անկեալս ընդ աղտեղութեամբ մարդ՝ սրբիցից զԱս- տուած, զԱստուածոյ անմեղ: 13. ի Եւ չիք Եւ զի յաւիտեան և ողորմ նորա՝ վասն այսորիկ եւն. : 14. Չեռագիրն մէջ նա- խաղասութիւնս յաջորդէն վերջ զրուած է. ըստ խմատին ուղղեցի: 15. Եւ Աստու- ծոյ, 16. Եւ վայելեալ, 17. յն. միայն զի նորա և փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտեանց. ամէն:

Ս. ՍԻԼՈՒԻԱՅԻ ԿԱՄ ԼԱՍԻ ԵՒՍ ԵԹԵՐԻԱՅԻ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ի Ս. ՏԵՂԻՍ

(Շար. տե՛ս Բազմ. 1933. էջ 491)

Յետ կարգալու, ուրեմն այդ տեղւոյն վրայ բոլորը Մովսէսի գրեցն, և ըստ օ- ըրինի պատարագ ընելով և մենք հաղոր- ղուելով հոն, երբ եկեղեցիէն ելլելու վրայ էինք, քահանաները մեզի տուին տեղւոյն օրհնութիւնները, այսինքն այն պտուղնե- րէն որ նոյն լերան վրայ կը հասնին: Վասն զի թէեւ Սինա սուրբ լեռը ամբող- ջովին ապառաժուտ է, այնպէս որ ոչ մէկ բոյս ունի, սակայն ստորեւ, այն լեռնե- ընդ ոտքին մօտ, այսինքն թէ անոր շուրջն են, որ միջինն է և թէ՛ անոնց որ շուրջն են, բիշ մը հող կայ. հոն, այդ սուրբ միայ- նակեացները, ըստ իրենց ջանասիրու- թեան, շուտով փոքրիկ ծառեր կը տնկեն և պտղանոց կը շինեն կամ ագարակ, և անոնց բով եղած մենաստանները որպէս թէ այն լերան հողէն պտուղներ կը ստա- նան, որոնց համար սակայն կը տեսնուի

որ իրենց ձեռքով աշխատած են: Հոն ու- րեմն երբ այսպէս հաղորդուեցանք և օր- հնութիւնները տուին մեզի այն սուրբերը եւ եկեղեցւոյ դռնէն դուրս ելանք, այն ատեն սկսայ աղաչել անոնց որ մեզի ցու- ցընեն բոլոր տեղերը: Այն ատեն այդ սուրբերը հաճեցան մեզի ցուցնել մէջ մի վայր: Վասն զի մեզի ցոյց տուին այն այրը՝ ուր կեցեր էր Ս. Մովսէս, երբ կրկին անգամ Աստուծոյ լեռն ելած էր որպէսզի վերստին առնէր տախտակները՝ առաջինները ջախջախած ըլլալով երբ ժո- ղովուրդը մեղանչեց. և միւս բոլոր տե- ղերը՝ զորս կը փափաքէինք կամ որոնց իրենք լաւատեղեակ էին՝ հաճեցան մեզի ցուցնել:

Բայց կ'ուզեմ որ ան ալ գիտնաք, յարգելի տիրուհի Բոյրեր, թէ այն տեղէն՝ ուր էինք, այսինքն եկեղեցւոյ պատերուն

շուրջը, այսինքն միջին լերան կատարէն այնպէս մեզմէ ցած կը տեսնուէն այն լեռները՝ որոնց վրայ նախապէս հազիւ ելած էինք, որպէս թէ ըլլալինք ըլլա- յին, թէեւ այնքան անսահման են որ, կը համարեմ թէ երբեք անոնցմէ աւելի բարձր տեսած չըլլամ, բաց ի այս միջինէն որ զանոնք մեծապէս կը գերազանցէր: Իսկ Եզրիպտոսն ու Պաղեստինը և Կարմիր ծո- վը և Պարթեւինեան ծովը որ Աղեքսան- զրիա կը տանի, ինչպէս նաեւ Սարակի- նոսներու ընդարձակ սահմանները այնքան ցած կը տեսնուէին մեզմէ վար, որ կար- ծես մարդ չի հաւատար: Եւ այն սուր- բերը մեզի կը ցուցնեն այդ իւրաքանչիւրը:

Գ. — Յետ կատարելու բոլոր փափաք- ներս՝ որոնց համար աճապարած էի վեր ելլել, սկսանք արդէն վար իջնել Աստու- ծոյ լերան մը վրայ, որ անոր կից է, և այդ տեղը Քորէք կը կոչուի. զի հոն եկեղեցի կայ: Վասն զի ասիկա Քորէքի տեղն է, ուր կեցաւ Ս. Եզրիա մարգարէն, ուր փախաւ Աքաբ թագաւորի երեսէն, ուր Աստուած իրեն հետ խօսեցաւ և ըսաւ « Ի՞նչ կ'ընես հոս, Եզրիա » ինչպէս որ գրուած է թագաւորութեանց գրքին մէջ: Վասն զի քարայրն ալ՝ ուր պահուեա- ցաւ Ս. Եզրիա՝ այսօր ալ կը ցուցնեն եկե- ղեցւոյ դրան առջեւ, որ հոն է, կը ցուցնեն հոն նաեւ քարէ սեղան մը, զոր շինեց Ս. Եզրիա Աստուծոյ զոհ մատուցանելու հա- մար, ինչպէս որ այն սուրբերը կը հա- ճէին մեզի ցոյց տալ:

Հոնտեղ ալ ուրեմն մենք պատարագ մատուցինք և շատ ազօթք ըրինք, և կարգացուեցաւ նոյն տեղը թագաւորու- թեանց գրեցն. վասն զի մենք մեծապէս . . . միշտ կը փափաքէինք որ, ուր որ երթայինք, միշտ նոյն տեղը գրեցն կար- ղացուէր: Հոն ալ պատարագ մատուցանելէն վերջ ուրիշ տեղ գնացինք՝ անկէ ոչ շատ հեռու, ինչպէս որ մեզի կը ցուցնէին քա- հանաները կամ միայնակեացները, այս- ինքն այնտեղ ուր կեցած էր Ս. Ահարոն՝ Եթիօպիայու ծերերուն հետ, երբ Ս. Մով-

սէս Աստուծմէ կը ստանար Օրէնքը Իս- րայէլի որդւոց:

Այնտեղ ուրեմն, թէեւ յարկ մը չկայ, կայ սակայն ահագին քար մը վրան չորս կողմը տափարակ, որուն վրայ կ'ըսուի թէ կեցեր են այն սուրբերը. վասն զի մէջտեղն ունի իբրեւ քարակերտ սեղան մը: Հոն ալ ուրեմն կարգացուեցաւ նոյն տեղը Մովսէսի գրեցն և մէկ սաղմոսս ըսուեցաւ՝ տեղւոյն յարմար: Հոն ազօթքն ընելէն վերջ՝ անկից վար իջանք:

Եւ ահա արդէն գրեթէ ութերորդ ժամն եղաւ, և ղեւ երբեք մղոն կը մնար որ կտրէինք լեռները՝ որոնց մէջ մտած էինք նախորդ իրիկունը. բայց նոյն կողմէն դուրս պիտի չելլէինք՝ ուսկից որ մտած էինք, ինչպէս որ վերն ըսի, վասն զի հարկ էր որ պտտէինք բոլոր սուրբ տե- ղերն և մենաստանները որ հոն կային, տեսնել և այնպէս իջնել ծայրը այն հով- տին՝ ինչպէս վերն ըսի, այսինքն այն հովտին՝ որ Աստուծոյ լերան տակն է: Եւ անոր համար հարկ էր որ այդ հով- տին ծայրն իջնէինք, որովհետեւ հոն շատ մենաստաններ կային սուրբ մարդերու և եկեղեցի մ'ալ տեղւոյն վրայ՝ ուր էր մո- լենին, որ մինչեւ այսօր կ'ապրի և ըն- ձիւղներ կ'արձակէ: Եւ այսպէս ուրեմն, Աստուծոյ լեռնէն իջած հասանք մորե- նին՝ հաւանօրէն տասներորդ ժամուն: Հոս է մորենին, ինչպէս վերն ըսի, որուն մէջէն Տէրը Մովսէսի հետ խօսեցաւ կը- րակով, որ այն տեղն էր ուր շատ մե- նաստաններ կան և եկեղեցի մ'ալ նոյն հովտին ծայրը: Իսկ եկեղեցւոյն առջեւն ալ հաճելի պարտէզ մը կայ, որ առատ և ընտիր ջուր ունի, և այդ պարտէզին մէջն է որ մորենին կը գտնուի: Հոն մօտը կը ցուցնեն նաեւ տեղը ուր կեցաւ Ս. Մովսէս, երբ Աստուած իրեն ըսաւ « Կօ- շիկներդ հանէ » եւն. : Երբ այն տեղն հասանք՝ արդէն տասներորդ ժամն էր, ուս- տի արդէն երեկոյ էր՝ չկրցանք պատարագ ընել: Բայց ազօթք ըրինք եկեղեցւոյ մէջ ինչպէս նաեւ պարտէզին մէջ մորենին ըով, կարգացուեցաւ նաեւ այն տեղը Մով-

սէսի գրքէն՝ սովորութեան համեմատ, և այսպէս որովհետեւ երեկոյ էր, մեզի հան- գըստարան պատրաստեցինը պարտէզին մէջ մորենիին դիմաց սուրբերուն հետ. և այսպէս հոն հանգչեցանը: Եւ յաջորդ օրը, կանուխ արթննալով խնդրեցինը քահա- նաներէն որ հոն ալ պատարագ մատու- ցուի, ինչպէս որ եղաւ:

Ե. — Եւ որովհետեւ մեր ճամբան այն- պէս էր որ՝ պէտք էինը երթալ կեդրոնական երկայնածիփ հովտէն, այսինքն այն հով- տէն որուն մասին վերը խօսեցայ, ուր նստան Խարայէլի որդիքը երբ Մովսէս Աստուծոյ լեռն ելաւ և իջաւ. ուստի քանի որ կը յառաջանայինը այդ ամբողջ հով- տէն՝ այն սուրբերը մեզի կը ցուցնէին իւրաքանչիւր տեղ: Վասն զի ձորին ա- ռաջին մուտքին, ուր կեցած էինը և տե- սած մորենիին, որուն մէջէն Աստուած խօ- սեցաւ Մովսէսի հետ կրակով, նաեւ այն տեղը ուր կեցած էր Ս. Մովսէս երբ Աստուած իրեն ըսաւ. «Կօշիկներդ հանէ, վասն զի կեցած տեղդ սուրբ երկիր է»:

Երբ մեկնեցանը մորենիէն՝ միշտ մեզի սկսան ցուցնել միւս տեղերն ալ: Վասն զի ցոյց տուին մեզի նաեւ այն տեղը ուր եղած էր Խարայէլի որդեաց բանակետը՝ այն օրերուն երբ Մովսէս լեռան վրայ կեցաւ: Յոյց տուին մեզի նաեւ այն տեղը ուր հորթը շինուեցաւ. որովհետեւ այնտեղ կանգնած են մեծ քար մը՝ որ մինչեւ այսօր կեցեր է:

Մենք ալ ըստ որում կը յառաջէինը, դիմացէն կը տեսնէինը լեռան գագաթը՝ որ ամբողջ հովտին վրայ կը նայի, ուսկից սուրբ Մովսէս տեսաւ Խարայէլի որդիքը որ պար բռնած էին այդ օրերուն՝ երբ հորթը շինած էին: Յոյց տուին նաեւ ա- ռաստոյ վէմ մը այնտեղ ուր կ'իջնէր Ս. Մովսէս Յեսուայ որդւոյ Նաւեայ հետ, և բարկացած՝ այդ քարին էր որ զարկաւ ջախջախեց տախտակները՝ զորս կը բերէր:

Յոյց տուին նաեւ թէ ինչպէս անոնց իւրաքանչիւրը տունէր ունէր հովտին մէջ, որոնցմէ մինչեւ այսօր հիմեր կը տեսնու- լին, քառակուսի մեծ քարեր ըլլալուն:

Յոյց տուին նաեւ տեղը՝ ուր Մովսէս հրամայեց Խարայէլի որդեաց վագել զոնէ զուռ և զառնալ զէսլ ի լեռը:

Դարձեալ ցոյց տուին մեզի նաեւ տե- ղը՝ ուր Ս. Մովսէսի հրամանով այրուե- ցաւ հորթը զոր Ահարոն շինած էր անոնց: Յոյց տուին դարձեալ այն հեղեղատը որմէ անցուց Ս. Մովսէս Խարայէլի որդիքը, ինչ- պէս որ զրուած է Ելից գրքին մէջ: Յոյց տուին մեզի նաեւ այն տեղը ուր եօթա- նասուն հոգի ստացան Մովսէսի հոգիէն: Դարձեալ ցոյց տուին մեզի այն տեղը ուր Խարայէլի որդիքը կերակուրներու ցանկու- թիւնն ունեցան: Վասն զի ցոյց տուին մեզի նաեւ այն տեղը ուր հրայրեացք կոչուած է, որովհետեւ վրաններուն մաս մը այրեցաւ՝ և կրակը դադրեցաւ այն ատեն երբ Ս. Մովսէս աղօթեց:

Յոյց տուին նաեւ այն տեղը ուր անոնց անձրեւեց մանանայ և լորամարգիւ Այո- պէս ուրեմն մի առ մի մեզի ցոյց տուին ինչ որ գրուած է Մովսէսի սուրբ գրք- քերուն մէջ այնտեղ, այսինքն այն ձորին մէջ՝ որ ըսի թէ Աստուծոյ լեռան տակ կը տարածուի, այսինքն սուրբ Սինայի: Եւ այդ ամէնը մի առ մի բաւական է զրել, որովհետեւ այդքան բան կարելի չէ միտքը պահել. բայց երբ ձեր սէրը կարդայ Մովսէսի սուրբ գրքերը, ուշա- դրութեամբ կը տեսնէ, ամէն բան որ հոն կատարուեցաւ: Ասիկա է ուրեմն այն հո- վիտը ուր զատիկը կատարուեցաւ Խարա- յէլի որդեաց Եզրայուսէն ելլելու տարելի- ցին, որովհետեւ այդ հովտին մէջ էր որ Խարայէլի որդիքը բաւական ատեն բնա- կեցան, այսինքն մինչեւ որ սուրբ Մովսէս Աստուծոյ լեռն ելաւ և իջաւ առաջին և երկրորդ անգամ, և յետոյ կրկին այնքան բնակեցան հոն, մինչեւ որ կազմուեցաւ տապանակը և այն ամէն բան որ եղաւ Աստուծոյ լեռան վրայ: Վասն զի մեզի ցոյց տուին նաեւ այն տեղը ուր առաջին անգամ հաստատուեցաւ տապանակը և կատարուեցաւ ամէն ինչ՝ զոր Աստուած հրամայած էր Մովսէսի Սինա լեռան վը- րայ՝ որպէսզի ըլլային:

Տեսանք նաեւ հովտին ծայրը ցանկու- թեան յիշատակները, այն տեղոյն վրայ սակայն ուր կրկին դարձանք մեր ճամ- բուն, այսինքն է ուր այն մեծ հովիտէն ելլելով մտանք ճամբան՝ ուսկից եկած էինը, այն լեռներուն մէջ՝ զորս յիշեցի: Վասն զի նոյն օրը գացինը նաեւ միւս սրբասուն միայնակեացներուն, որոնք սա- կայն չէին կրնար Աստուծոյ լեռը գալ նուիրութեան ընելու՝ իրենց (յառաջա- ցեալ) տարիքին կամ տկարութեան պատ- ճառաւ. որոնք, սակայն, իրենց մենաս- տաններն եկողները հաճեցան ընդունիլ մարդասիրութեամբ: Այսպէս ուրեմն յետ տեսնելու բոլոր սուրբ տեղերը՝ ուր բը- նակած էին Խարայէլի որդիքը Աստուծոյ լեռան մօտեցած կամ հեռացած ատեննին, յետ տեսնելու նաեւ այն սուրբ մարդիկը՝ որ հոն կը բնակին՝ Աստուծոյ անունով դարձանք Փառան:

Եւ թէեւ պէտք եմ միշտ ամէն բանի մէջ Աստուծոյ շնորհակալ ըլլալ, չեմ ըսեր այնքան և այնպիսի բաներու մէջ՝ զորս ինձ անարժանիս հանդէպ հաճեցաւ ընել, որ պտտէի բոլոր տեղերը՝ որ իմ արժանիքովս չէր. սակայն և ոչ կարող եմ շնորհակալ ըլլալ այն բոլոր սուրբե- րուն որոնք կը հաճէին իմ նուաստու- թիւնս սիրայօժար կերպով իրենց վան- քերուն մէջ ընդունիլ կամ տանիլ բոլոր այն տեղերը զորս ես սուրբ Գրոց համեմատ կը հետազօտէի: Շատերը սակայն այն սուրբերէն որ Աստուծոյ լեռան վրայ կամ նոյն լեռան շուրջը կը բնակէին, հաճեցան

զմեզ մինչեւ Փառան տանիլ, որոնք որ սակայն զօրաւոր էին մարմնով:

Զ. — Եւ երբ ուրեմն Փառան հասանք, որ Աստուծոյ լեռնէն երեսուն և հինգ մը- ղոն հեռու է, հարկ եղաւ հոն երկու օր մնալ՝ կազդուրուելու համար: Եւ երրորդ օրը փութալով եկանը դարձեալ բնակու- թեան տեղը, այսինքն Փառանի անապա- տը, ուր գնացեր մնացեր էինը, ինչպէս որ վերագոյն պատմեցի:

Յետոյ կրկին յաջորդ օրը ջուր հանելէ վերջ եւ դեռ քիչ մը շրջելով լեռներու միջեւ հասանք բնակատեղին որ ծովուն մօտ էր, այսինքն հոն՝ ուր արդէն լեռ- ները կը սպառնէ և կը սկսինը երթալ ծովեզերքէն, սակայն այնպէս մօտ ծովե- զերքին որ երբեմն ալիքները կենդանի- ներու ոտքին կը հասնին, երբեմն հարիւր կամ երկու հարիւր քայլ (հեռու կը մը- նան) և երբեմն ալ հինգհարիւր քայլ հեռու՝ անապատէն կ'երթանը, վասն զի հոն գրեթէ ճամբայ չկայ այլ ամբողջովին աւազուտ անապատներ են:

Իսկ փառանցիները որ հոնտեղէն սովոր են ուղտերով անցնիլ, տեղ տեղ նշաններ դրած են, և այդ նշաններուն է որ կ'ուղ- ղուին և այնպէս կը ճամբորդեն օրուան մէջ: Իսկ գիշերը ուղտերու հետքերուն ուշ կը դնեն: Եւ ատկէ աւելի ի՞նչ. (զի) փառանցիներն այդ տեղերուն մէջ սիրով և ապահով կը ճամբորդեն ըստ սովորու- թեան գիշերը, քան այն մարդիկը որ կ'ու- ղեւորին յայտնի ճամբաներէն:

Թրգմ. Հ. Ե. Փ.